



Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 7

Աուդիտ և ներքին վերահսկողություն

Քննաթերթ. Պատասխաններ

Հուլիս, 2023թ.

Խնդիր 1. Գնահատման կարգը

Ա1	2 միավոր	Բ1	3 միավոր
Ա2	2 միավոր	Բ2	14 միավոր
Ա3	2 միավոր		
Ա4	2 միավոր		
Ընդամենը Ա	8 միավոր	Ընդամենը Բ	17 միավոր
Ընդամենը Խնդիր 1		25 միավոր	

Պատասխաններ

Ա1) Արդյունավետ էականություն

Արդյունավետ էականությունը իրենից ներկայացնում է աուդիտորի կողմից սահմանած գումար կամ գումարներ, որոնք ցածր են ամբողջությամբ վերցրած ֆինանսական հաշվետվությունների համար սահմանված էականության մակարդակից՝ և որոնք նպատակ ունեն նվազեցնելու չուղղված ու չհայտնաբերված խեղաթյուրումների ընդհանուր գումարի՝ ամբողջությամբ վերցրած ֆինանսական հաշվետվությունների համար սահմանված էականությունը գերազանցելու հավանականությունը՝ մինչև համապատասխանորեն ցածր մակարդակ:

Այն վերաբերում է նաև աուդիտորի կողմից սահմանված այն գումարին կամ գումարներին, որոնք ավելի ցածր են առանձին դասերի գործառնությունների, հաշվի մնացորդների կամ բացահայտումների էականության մակարդակից կամ մակարդակներից: (ԱՄՍ 320. պարբ. 9)

Ա2) Արդյոք աուդիտորը կարող է վերանայել էականության մակարդակ(ներ)ը, և որ դեպքերում (ԱՄՍ 320, պարագ. 12, 13)

Աուդիտորը պետք է վերանայի ամբողջությամբ վերցրած ֆինանսական հաշվետվությունների էականության մակարդակը (իսկ կիրառելիության դեպքում՝ նաև առանձին դասերի գործառնությունների, հաշվի մնացորդների կամ բացահայտումների էականության մակարդակը կամ մակարդակները), եթե աուդիտի ընթացքում հայտնի է դառնում այնպիսի տեղեկատվություն, որը կստիպեր նրան նախապես սահմանել էականության այլ գումար (կամ գումարներ):

Եթե աուդիտորը գալիս է այնպիսի եզրահանգման, որ ֆինանսական հաշվետվությունների համար ամբողջությամբ վերցրած էականության ավելի ցածր մակարդակը ավելի համապատասխան է, (իսկ կիրառելիության դեպքում՝ նաև առանձին դասերի գործառնությունների, հաշվի մնացորդների կամ բացահայտումների էականության մակարդակը կամ մակարդակները), քան մինչ այդ որոշված մակարդակն էր, ապա նա պետք է որոշի արդյոք անհրաժեշտություն կա փոխել արդյունավետ

էականությունը, և արդյոք հետագա աուդիտորական ընթացակարգերի բնույթը, ժամկետները և ծավալները փոփոխության ենթակա չեն:

Կարող է անհրաժեշտություն առաջանալ փոփոխել ֆինանսական հաշվետվությունների՝ որպես ամբողջություն վերցրած էականության մակարդակը (իսկ կիրառելիության դեպքում՝ նաև առանձին դասերի գործառնությունների, հաշվի մնացորդների կամ բացահայտումների էականության մակարդակը կամ մակարդակները) աուդիտի ընթացքում տեղ գտած իրադարձությունների փոփոխության (օրինակ՝ կազմակերպության բիզնեսի մեծ մասի օտարման վերաբերյալ որոշում), նոր տեղեկատվության, կամ հետագա աուդիտորական ընթացակարգերի կատարման արդյունքում կազմակերպության և նրա գործունեության մասին աուդիտորի ունեցած պատկերացման փոփոխության արդյունքում: Օրինակ՝ եթե աուդիտի ժամանակ պարզ է դառնում, որ ֆինանսական փաստացի արդյունքները մեծ հավանականությամբ զգալիորեն տարբերվելու են ժամանակաշրջանի վերջում ակնկալվող ֆինանսական արդյունքներից, որոնք նախապես օգտագործվել էին որոշելու որպես ամբողջություն վերցրած ֆինանսական հաշվետվությունների էականության մակարդակը, ապա աուդիտորը փոփոխում է էականության այդ մակարդակը:

Ա3) Որակական գործոններ

էականության բոլոր մակարդակները սահմանելիս, ինչպես նաև խեղաթյուրումների էականությունը որոշելիս աուդիտորը պետք է հաշվի առնի ինչպես քանակական, այնպես էլ որակական գործոններ:

Քանակապես փոքր խեղաթյուրումները կարող են դիտարկվել որպես որակապես էական, օրինակ, երբ դրանք վերաբերում են.

- (1) Օրենքներին և այլ կարգավորումներին, որոնք կարող են ազդել օգտագործողների ակնկալիքների վրա՝ կոնկրետ հոդվածների չափման կամ բացահայտման հետ կապված (օրինակ՝ կապակցված կողմերի հետ գործարքները և ղեկավարության ու կառավարման օղակներում գտնվող անձանց վճարված հատուցումները):
- (2) Բացահայտումներին, որոնք կազմակերպության գործունեության ոլորտի համար առանցքային են (օրինակ՝ հետազոտման և զարգացման ծախսերը՝ դեղագործական ընկերության համար):

Ա4) Էականության փաստաթղթավորումը

Աուդիտորը աուդիտորական փաստաթղթերում պետք է ընդգրկի հետևյալ գումարները և դրանց որոշման ժամանակ նկատի ունեցած հանգամանքները.

- ա) ֆինանսական հաշվետվությունների որպես ամբողջության էականության մակարդակը,
- բ) կիրառելիության դեպքում՝ նաև առանձին դասերի գործառնությունների, հաշվի մնացորդների կամ բացահայտումների էականության մակարդակը կամ մակարդակները,
- գ) արդյունավետ էականության մակարդակը, և
- դ) աուդիտի ընթացքում տեղ գտած վերը նշվածների փոփոխությունները:

Բ 1) Ամբողջությամբ վերցրած ֆինանսական հաշվետվությունների համար էականություն

Երբեք տեղին չէ նախորդ տարվա էականությունը ընթացիկ տարվա նկատմամբ կիրառելը: Էականությունը պետք է գնահատվի յուրաքանչյուր տարի:

Եթե ֆինանսական վիճակը շատ չի փոփոխվել և արդյունքը համադրելի է նախորդ ժամանակաշրջանի հետ, հնարավոր է, որ տարեցտարի հաշվարկված էականության գումարներն իրար մոտ լինեն, սակայն դա չի նշանակում, որ աուդիտորը չպետք է այն գնահատի յուրաքանչյուր տարվա աուդիտի համար: Էականությունը գնահատելիս աուդիտորը պետք է հաշվի առնի **ընթացիկ ամսաթվի դրությամբ հայտնի բոլոր գործոնները**: Տվյալ դեպքում ֆինանսական վիճակն էապես փոփոխվել է՝ ավելացնելով աուդիտորական ռիսկը, որը կարող է էականությունը նվազեցնելու պատճառ հանդիսանալ:

Քանի որ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պատկերն **էականորեն փոփոխվել է**, քիչ հավանական է, որ ընթացիկ տարվա համար որոշված էականության գումարը մոտ լինի նախորդ տարվա էականության գումարին: Ելնելով հասանելի տեղեկատվությունից՝ **հավանական է**, որ գումարային առումով **էականությունը չափազանց ցածր կլինի**, ինչը պայմանավորված է ակտիվների մնացորդի ընդհանուր նվազմամբ և վնասով, որն ընկերությունը փաստորեն կրել է ընթացիկ տարում: Հնարավոր է նաև, որ ելնելով ընթացիկ իրավիճակից, ընթացիկ տարվա համար էականությունը որոշելիս չեն կիրառվի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված գումարները:

Բ2) Աուդիտորական ռիսկի հետ կապված որոշ հարցեր

Ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ուսումնասիրությունից հետևում է, որ աուդիտորական աշխատանքներ պետք է կատարվեն հետևյալ հարցերի հետ կապված.

Անընդհատություն

Ընդամենը ակտիվների հաշվեկշռային արժեքը 373,000 հազար դրամից նվազել է 165,000 հազար դրամի: Չնայած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունը չի ներկայացվել, այնուամենայնիվ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից պարզ է, որ ընթացիկ տարվա վնասը կազմել է 211,000 հազար դրամ:

Ակնհայտորեն նկատվում է նաև **ինչպես պաշարների, այնպես էլ դեբիտորական պարտքերի նվազում**, ինչը **ենթադրում է գործունեության ծավալների նվազում**, չնայած այն հանգամանքին, որ կրեդիտորական պարտքերում նման էական նվազում չի դիտվում: Այնուամենայնիվ, դա կարող է վկայել, որ Ընկերությունը մատակարարներին վճարումները չի կատարում նույն մոտեցմամբ, ինչ նախորդ տարի: Գործունեության ծավալների իրական նվազումները հասկանալու համար **անհրաժեշտ է ուսումնասիրել շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունը**:

Հաշվետու ամսաթվի դրությամբ **դրամական միջոցների վիճակը ևս վատթարացել է**՝ դրանց մնացորդը նվազել է 22,000 հազար դրամով: Դրամական միջոցների շարժի մասին հաշվետվությունը թույլ կտար բացահայտել այս նվազման մանրամասն պատճառները: Այնուամենայնիվ, Ընկերությունը մարել է բանկային վարկից 5,000 հազար դրամ՝ այդպիսով նվազեցնելով ընդհանուր զուտ պարտքը:

Որպես ամփոփում նշենք, որ աուդիտորական աշխատանք պետք է իրականացվի՝ կապված անընդհատության հարցի հետ, քանի որ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում **առկա են Ընկերության անընդհատ գործելու կարողության հետ կապված մի քանի խնդիրներ**: Երբ

հետագայում մեզ հասանելի լինի շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունը, այս խնդիրները հետագայում կարող են բազմապատկվել:

Պաշարներ

Նախորդ պարբերությունում պաշարները հիշատակվել են անընդհատության հետ կապված խնդիրների համատեքստում: Աուդիտորական աշխատանքներ պետք է կատարվեն պաշարների հետ կապված, քանի որ դրանց **մնացորդը նախորդ տարվա համեմատ էական նվազել է**, ինչը **տարօրինակ է արտադրություն իրականացնող կազմակերպության համար**:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությամբ միայն սա հնարավոր չի բացատրել: Օրինակ՝ քանի որ դեբիտորական պարտքերը համապատասխան աճ չեն ունեցել, ինչը կարող էր նշանակել, որ տարեվերջից առաջ տեղի էր ունեցել վաճառք, և կրեդիտորական պարտքերը համապատասխանորեն չեն նվազել, ինչը կնշանակեր, որ տարեվերջից առաջ գնումների ծավալը ցածր է: Հնարավոր է, որ պաշարների գույքագրում չի իրականացվել պաշարների բոլոր միավորների համար: Որպես այլընտրանք, պաշարների նվազումը պարզապես կարող է նշանակել գործունեության ծավալների նվազում (ինչը քննարկվել է նախորդ պարբերությունում):

Երաշխիքի պահուստ

2022թ. ձևավորվել է 20,000 հազար դրամ երաշխիքի պահուստ: Աուդիտորը պետք է ուսումնասիրի այդ հանգամանքի պատճառները և ստուգի, թե արդյոք պահուստը ճիշտ է հաշվարկվել:

Տարօրինակ է, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հանկարծ առաջանում է երաշխիքի պահուստ: Դա կարող է ենթադրել, որ տեղի է ունեցել հաճախորդների հետ կնքված պայմանագրերի պայմանների փոփոխություն կամ հենց հաճախորդների կազմի փոփոխություն (որոնց հետ պայմանագրերը կնքվել են այլ պայմաններով): Որպես այլընտրանք, սա կարող է նշանակել, որ **ընթացիկ տարում ՀՀՄՍ 37-ը սխալ է կիրառվել, կամ հարկավոր էր այն կիրառել նախորդ տարում**, սակայն չի արվել:

Այլ էական հարցեր

Ինչպես նկարագրված է նախորդ պարբերություններում, ելնելով վնասի առկայության մասին վկայող տվյալներից և ակտիվների ընդհանուր գումարի նվազումից՝ հավանական է, որ էականությունը կկազմի ցածր գումար: Այս պարագայում հավանական է, որ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տողերի մեծ մասը կլինի էական (բացառությամբ ներդրումները և կանխիկ միջոցները, որոնց մասով ռիսկը ցածր է):

Այնուամենայնիվ, քանի որ հավանաբար բանկային վարկն ապահովված է բավարար և համապատասխան ապացույցներով, մյուս մնացորդներից առավել ռիսկային են հանդիսանում **առևտրային դեբիտորական պարտքերը և առևտրային կրեդիտորական պարտքերը** (պատճառները նկարագրված են «Անընդհատություն» պարբերություններում): Հիմնական միջոցների հետ կապված ռիսկը գնահատելու համար անհրաժեշտ են լրացուցիչ մանրամասներ: Պետք է ուսումնասիրել, թե ինչու կանխիկ դրամական միջոցի մնացորդը նույն է մնացել: Հաշվի առնելով կանխիկ դրամաշրջանառության նկատմամբ սահմանված սահմանափակումները, արդյոք կանխիկի շարժ տեղի է ունեցել, և արդյոք կանխիկի մնացորդը առկա է:

Խնդիր 2. Գնահատման կարգը

Ա	4 միավոր	Բ1	6 միավոր
		Բ2	6 միավոր
Ընդամենը Ա	4 միավոր	Ընդամենը Բ	12 միավոր
Ընդամենը Խնդիր 2		16 միավոր	

Պատասխաններ

Ա) Աուդիտորական ռիսկ

Աուդիտորական ռիսկն այն ռիսկն է, որ աուդիտորը անհամապատասխան աուդիտորական կարծիք կհայտնի, երբ ֆինանսական հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են: Աուդիտորական ռիսկը էական խեղաթյուրման և չհայտնաբերման ռիսկերից կախված ֆունկցիա է: Այն կազմված է ռիսկի երեք տարբեր տարրերից (ԱՄՍ 200, պարբ. 13).

(1) Բնորոշ ռիսկ՝ գործառնության դասի, հաշվի մնացորդի կամ բացահայտման վերաբերյալ հավաստումների զգայունությունը խեղաթյուրման նկատմամբ, որը կարող է էական բնույթ կրել առանձին վերցրած կամ այլ խեղաթյուրումների հետ միասին, նախքան առնչվող ցանկացած հսկողության տարր հաշվի առնելը:

Բնորոշ ռիսկը բնականոն եղանակով առաջանում է բիզնեսի կամ որոշակի հաշիվների/գործարքների հետ կապված: Այն կարող է կապված լինել բարդ գործարքների հետ, կամ որոշակի նպատակների հասնելու համար ղեկավարության վրա գործադրվող ճնշման հետ:

(2) Վերահսկողության ռիսկ՝ այն ռիսկը, որ ներքին վերահսկողության համակարգը չի հայտնաբերի կամ չի կանխի սխալները:

Սրա պատճառ կարող է հանդիսանալ թույլ հսկողության միջավայրը՝ այն է. ղեկավարության կողմից անփույթ վերաբերմունքը՝ հսկողական ընթացակարգեր ներդնելու համար կամ առկա հսկողության ընթացակարգերի խափանման նկատմամբ: Օրինակ՝ եթե կրեդիտորական պարտքերի գրանցամատյանում արտացոլված մնացորդները պատշաճ կերպով չեն համադրվում մատակարարների հետ ստորագրված փոխադարձ ակտերի հետ, ապա սա կարող է պատճառ հանդիսանալ, որպեսզի առևտրային կրեդիտորական պարտքերում առկա սխալները չհայտնաբերվեն:

(3) Չհայտնաբերման ռիսկ՝ այն ռիսկն է, որ աուդիտորի կողմից իրականացվող ընթացակարգերը, որոնք ուղղված են աուդիտորական ռիսկը մինչև ընդունելի ցածր մակարդակը նվազեցնելուն, չեն հայտնաբերի առկա խեղաթյուրումը, որը կարող է էական բնույթ կրել առանձին կամ այլ խեղաթյուրումների հետ միասին:

Չհայտնաբերված խեղաթյուրումներ կարող են առաջանալ ընտրանքային և ոչ ընտրանքային ռիսկերի առկայության դեպքում (ԱՄՍ 450, Ա8): Այսինքն՝ չհայտնաբերման ռիսկը կազմված է ընտրանքային ռիսկից (ռիսկ առ այն, որ ընտրանքի հիման վրա կատարված աուդիտորի եզրահանգումը կարող է տարբերվել այն եզրահանգումից, երբ նույն աուդիտորական ընթացակարգը կիրառվեր ամբողջ

բազմության նկատմամբ) և ոչ ընտրանքային ռիսկ (ռիսկ առ այն, որ աուդիտորը կարող է ոչ պատշաճ ընթացակարգ կիրառել կամ սխալ մեկնաբանել ստացված ապացույցը):

Բ1) և Բ2) Վեց աուդիտորական ռիսկեր և ռիսկերին արձագանքներ

Աուդիտորական ռիսկ (Բ1)	Ռիսկերին արձագանք (Բ2)
<p>Ընկերությունը զբաղվում է նորածն կոշիկների վաճառքով: Դրանք ցանկալի ապրանքներ են՝ հետևաբար առկա է գողության ռիսկ: Բացի այդ, հնարավոր է դժվար լինի դրանց վաճառքը, քանի որ նորածնության նկատմամբ ճաշակները փոփոխվում են: Այդպիսով, պաշարները կարող են գերազնահատված լինել, քանի որ դրանք կարող են իրացման զուտ արժեքից բարձր արժեքով հաշվառվել, կամ էլ փաստացի քանակները կարող են ավելի քիչ լինել, քան գրանցված քանակները:</p>	<p>Պաշարների գույքագրման ժամանակ հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել գույքագրման հրահանգներին, որոնք վերաբերում են դանդաղ շրջանառելի միավորների բացահայտմանը:</p> <p>Առավել շեշտադրում է անհրաժեշտ կատարել տարեվերջի դրությամբ առկա հին պաշարների վերլուծության վրա՝ դանդաղ շրջանառելի պաշարների վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու համար:</p> <p>Անհրաժեշտ կլինի դիտարկել խանութներում և պահեստներում կոշիկների հետ կապված ֆիզիկական հսկողության տարրերը:</p> <p>Անհրաժեշտ է ընդլայնել տարեվերջից հետո տեղի ունեցած վաճառքների արժեքների վերանայումը՝ 2022թ. դեկտեմբերի 31-ին առկա պաշարների իրացման զուտ արժեքը գնահատելու համար:</p>
<p>Ընկերությունն արագ տեմպերով ձեռք է բերում նոր խանութներ և իրականացնում է դրանց արտաքին և ներքին դիզայնում փոփոխություններ: Դրանք էական ձեռքբերումներ են և առկա է ռիսկ, որ այս ձեռքբերումները պատշաճ կերպով չեն գրանցվել (ճանաչվել) որպես ակտիվ, կամ որպես ժամանակաշրջանի ծախս: որպես հիմնական միջոցներ, հիմնական միջոցների միավորի առանձին բաղադրիչներ կամ որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախս:</p>	<p>Հիմնական միջոցների ձեռքբերումներին վերաբերող փաստաթղթերը ստուգելու համար պետք է իրականացվեն հատուկ թեստեր:</p> <p>Անհրաժեշտ է կատարել ակտիվների հաշվառման գրանցամատյանի, ինչպես նաև հիմնական միջոցների վրա կատարվող հետագա ծախսումների հաշվի մանրամասն վերանայում՝ ստուգելու համար, թե արդյոք այնտեղ առկա են ծախսումներ, որոնք պետք է ճանաչվեն որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախս և ճիշտ են արդյոք իրականացվել հիմնական միջոցների միավորի և միավորի առանձին բաղադրիչների հաշվառումը:</p>
<p>Մանրաձախ վաճառքների արդյունքում գրանցվել է կանխիկ վաճառքից եկամուտների աճ, ինչը կարող է մեծացնել խարդախության</p>	<p>Իրականացնել վերլուծական ընթացակարգեր՝ յուրաքանչյուր վաճառասրահի ամսական եկամուտները համեմատելով այլ</p>

Աուդիտորական դիսկ (F1)	Ռիսկերին արձագանք (F2)
<p>կամ գողության հետևանքով եկամուտների ոչ ամբողջական գրանցման կամ չգրանցված եկամուտների առաջացման դիսկը:</p>	<p>վաճառասրահների եկամուտների հետ՝ անսովոր կամ անսպասելի հարաբերությունները բացահայտելու համար:</p> <p>Դրամարկղի գրքի գրանցումները համեմատել փաստացի բանկ մուտքագրված գումարների հետ: Ուսումնասիրել կանխիկ վաճառքներին վերաբերող առկա ներքին վերահսկողության ընթացակարգերը, էական կանխիկի մնացորդի դեպքում իրականացնել կանխիկ դրամական միջոցների գույքագրում:</p>
<p>Ընկերության արագ ընդլայնումը հանգեցրել է փոխառությունների ծավալի էական աճի, իսկ օվերդրաֆտի օգտագործման ծավալը հասցրել է դրա առավելագույն սահմանաչափին: Առկա է դիսկ, որ բանկը կարող է դադարեցնել վարկավորումը, և Ընկերությունն ի վիճակի չի լինի ժամանակին մարել իր պարտքերը (անընդհատ գործելու հետ կապված դիսկ):</p>	<p>Անհրաժեշտ կլինի վերանայել բանկի հետ նամակագրությունը՝ վարկավորման դադարեցման/ երկարաձգման վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու համար:</p> <p>Անհրաժեշտ է վերանայել տարեվերջից հետո տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները, ինչպես նաև դրամական հոսքերի կանխատեսումները, եթե կան նման կանխատեսումներ:</p>
<p>Չնայած Ընկերության ղեկավարությունը փորձառու է կոշիկների վաճառքի գործում, այնուամենայնիվ մանրածախ շուկայում նրանք փորձառություն չունեն:</p> <p>Չնայած սկզբնական փուլում մանրածախ խանութներում վաճառքները հաջող են, երկարաժամկետ հեռանկարում փորձառության բացակայությունը կարող է հանգեցնել վատ արդյունքների և վտանգի Ընկերության անընդհատ գործելու կարողությունը:</p>	<p>Վերանայել կամ քննարկել ղեկավարության հեռանկարային պլանները և դիտարկել դրանց իրագործելիությունը:</p>
<p>Ընկերությունը բացել է նոր խանութներ և ներդրել է անհատական պատվերների նոր համակարգ: Հնարավոր է, որ աշխատակազմն ամբողջությամբ չի տիրապետում նոր համակարգին, բացի այդ հնարավոր է, որ հսկողության տարրերը պատշաճ կերպով չեն նախագծված կամ արդյունավետ չեն գործում: Այս հանգամանքն ավելացնում է ֆինանսական</p>	<p>Անհրաժեշտ կլինի այցելել վաճառասրահներ՝ հսկողության համակարգի արդյունավետությունը գնահատելու համար:</p> <p>Անհրաժեշտ կլինի կատարել լրացուցիչ աշխատանք՝ նոր հաշվառման համակարգի նկատմամբ հսկողության փաստաթղթավորման և գնահատման համար՝ անհրաժեշտության</p>

Աուդիտորական ռիսկ (F1)	Ռիսկերին արձագանք (F2)
հաշվետվություններում սխալների հավանականությունը:	դեպքում իրականացնելով հսկողության տարրերի թեստավորում:

Ծանոթագրություն

Հնարավոր է, որ դիմորդը բացահայտի և բացատրի այլ աուդիտորական ռիսկեր, սակայն բոլոր հնարավոր միավորները ստանալու համար անհրաժեշտ են ընդամենը վեցը:

«Ռիսկերին արձագանք» սյունակում թվարկված են մի շարք ընթացակարգեր, բացի այդ հնարավոր է, որ դիմորդը մտաբերի այլ ճիշտ ու տեղին արձագանքներ, այնուամենայնիվ այստեղ ևս բոլոր հնարավոր միավորները ստանալու համար անհրաժեշտ են միայն վեցը:

Խնդիր 3. Գնահատման կարգը

Ա	8 միավոր	Բ	5 միավոր
Ընդամենը Խնդիր 3		13 միավոր	

Պատասխաններ

Ա) Արտաքին աուդիտորի պարտականությունները, խարդախության և սխալի ռիսկը

- (1) Արտաքին աուդիտորի վերջնական պատասխանատվությունն է արտահայտել կարծիք՝ ֆինանսական հաշվետվությունների **ճշմարիտ և իրական** լինելու վերաբերյալ: Սա նշանակում է, որ աուդիտորները տալիս են **ողջամիտ հավաստիացում** այն մասին, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են **էական խեղաթյուրումներից**:
- (2) **Մասնագիտական կասկածամտություն** – Աուդիտորը պատասխանատվություն է կրում ամբողջ աուդիտի ընթացքում մասնագիտական կասկածամտություն պահպանելու համար՝ հաշվի առնելով ղեկավարության կողմից վերահսկողության չարաշահման հնարավորությունը և ընդունելով, որ աուդիտորական ընթացակարգերը որոնք արդյունավետ են սխալները հայտնաբերելու համար, կարող են արդյունավետ չլինել խարդախությունը հայտնաբերելու համար:
- (3) **Քննարկումներ առաջադրանքի թիմի ներսում** – Առաջադրանքի թիմի անդամները պետք է նաև ունենան քննարկում՝ խարդախության կամ սխալի հետևանքով կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրված լինելու հնարավորության վերաբերյալ:
- (4) **Ռիսկերի գնահատում** – Կազմակերպության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման փուլում արտաքին աուդիտորը հաշվի է առնում խարդախության առկայության ցանկացած հայտանիշ, որը կարող է հանգեցնել էական խեղաթյուրման: Ռիսկերի գնահատումը ներառում է ղեկավար անձնակազմին և ներքին աուդիտորին (եթե կա) ուղղված հարցումները, ինչպես նաև վերլուծական ընթացակարգերի իրականացումը: Խարդախության պատճառով առաջացող էական խեղաթյուրմանը վերաբերող ցանկացած ռիսկ դիտարկվում է որպես նշանակալի ռիսկ:
- (5) **Արձագանքը գնահատված ռիսկերին** – Ֆինանսական հաշվետվությունների մակարդակում խարդախության արդյունքում էական խեղաթյուրումների գնահատված ռիսկին արձագանքելու նպատակով աուդիտորը պետք է նախագծի **համընդհանուր գործողություններ**: Այս գործողությունները ներառում են հետևյալը.
 - (i) Հանձնարարությունների **նշանակումը** առավել փորձառու կամ առանձնահատուկ հմտություններ ունեցող անձնակազմին կամ փորձագետներին, ինչպես նաև առավել շատ **հսկողության** ապահովումը:
 - (ii) Գնահատումը՝ արդյոք **հաշվապահական հաշվառման քաղաքականությունը** կարող է մատնանշել ֆինանսական հաշվետվողականության կեղծման առկայություն:

- (iii) Անկանխատեսելիության լրացուցիչ տարրերի ներառումը իրականացման ենթակա հետագա աուդիտորական ընթացակարգերի բնույթի, ժամկետների և ծավալների ընտրության ժամանակ:
- (6) **Առանձնահատուկ աուդիտորական ընթացակարգեր** - Անկախ ղեկավարության կողմից վերահսկողության չարաշահման ռիսկի աուդիտորի գնահատումից՝ աուդիտորը պետք է իրականացնի աուդիտորական ընթացակարգեր, որոնք ստուգում են մատյաններում գրանցումների և այլ ճշգրտումների պատշաճ լինելը: Հաշվապահական հաշվառման գնահատումները պետք է վերանայվեն՝ համոզվելու համար, որ դրանք կողմնակալ չեն և այն դեպքերում, երբ նշանակալի գործարքները դուրս են կազմակերպության բնականոն գործունեությունից, աուդիտորը պետք է ուսումնասիրի՝ արդյոք այդ գնահատումները թաքցնում են խարդախություն:
- (7) **Գրավոր հավաստումներ** – Արտաքին աուդիտորը պետք է ձեռք բերի գրավոր հավաստումներ ղեկավարությունից՝ հետևյալի մասին.
- (i) Նրանք ընդունում են իրենց պատասխանատվությունը խարդախության կանխման և հայտնաբերման նպատակով ներքին հսկողության նախագծման, իրականացման և պահպանման համար,
 - (ii) Նրանք աուդիտորին բացահայտել են ֆինանսական հաշվետվություններում խարդախության ռիսկի վերաբերյալ ղեկավարության գնահատման արդյունքների մասին,
 - (iii) Նրանք աուդիտորին բացահայտել են խարդախության փաստացի կամ կասկածելի այն դեպքերի մասին իրենց հայտնի ողջ տեղեկատվությունը, որոնք ազդում են կազմակերպության վրա և կապված են հետևյալ անձանց հետ՝ ղեկավարություն, ներքին հսկողությունում նշանակալի դերակատարություն ունեցող աշխատակիցներ, կամ այլ անձինք, եթե խարդախության դեպքը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա,
 - (iv) Նրանք աուդիտորին բացահայտել են խարդախության փաստացի կամ կասկածելի դեպքերի վերաբերյալ առաջադրված մեղադրանքների հետ կապված իրենց հայտնի ողջ տեղեկատվությունը:
- (8) **Հաշվետվողականություն**. Երբ արտաքին աուդիտորը բացահայտում է խարդախության դեպք կամ կասկածներ ունի դրա առկայության վերաբերյալ, ապա դրա մասին պետք է հաղորդի ղեկավարության համապատասխան մակարդակում գտնվող մարմիններին: Որոշ դեպքերում, օրինակ՝ երբ հարցը վերաբերում է իրավական դաշտին, ինչպես օրինակ փողերի վաճուճումը, կարող է կարիք լինել, որ աուդիտորն այդ հարցը ներկայացնի արտաքին մարմիններին:

Բ) Խարդախության և սխալի հետ կապված ռիսկեր

- (1) Ղեկավարության վարձատրությունն մասամբ կախված է **միջնորդավճարների ծավալներից**: Արդյունքում՝ ղեկավարությունը կարող է դիտավորյալ ուռճացնել հասույթի գումարը՝ իր սեփական եկամուտը մեծացնելու նպատակով:

- (2) Ցանցային ամրագրումների համակարգից օգտվելն առաջացնում է ռիսկ, որ տեղեկատվության փոխանցման ընթացքում կարող է տեղի ունենալ կորուստ կամ խափանում:
- (3) Եթե թվայնացված հաշվապահական հաշվառման համակարգում առկա հսկողության տարրերն արդյունավետ չեն գործում, հնարավոր է, որ տեղի ունենան սխալներ: Սխալները հնարավոր են նաև այն դեպքում, եթե որոշ աշխատակիցներ պարզել են, թե ինչպես կարելի է չարաշահել և շրջանցել հսկողության համակարգը և հնարավորություն ունեն փոփոխել հաշվապահական գրանցումները՝ ակտիվների հնարավոր յուրացումները թաքցնելու նպատակով:
- (4) Որոշ վճարումներ ստացվում են **կանխիկ**: Այս փաստի հետ կապված առաջանում է ռիսկ, որ դրամական միջոցները կարող են յուրացվել, իսկ հաշվապահական գրանցումները կարող են խեղաթյուրվել՝ այս փաստը թաքցնելու նպատակով:
- (5) Հատուցումների կենտրոնական հիմնադրամին վճարման ենթակա գումարները հաշվարկվում են՝ ելնելով տարեկան վաճառքների գումարներից: Ղեկավարությունը կարող է դրսևորել կողմնակալ մոտեցում և թերազնահատել վաճառքները՝ վճարման ենթակա գումարները նվազեցնելու համար, կամ հնարավոր է հասույթի ճանաչման ուշացում՝ վճարման ամսաթիվը հետաձգելու նպատակով:

Ծանոթագրություն

Հնարավոր է, որ դիմորդը բացահայտի և բացատրի այլ աուդիտորական ռիսկեր, սակայն բոլոր հնարավոր միավորները ստանալու համար անհրաժեշտ են ընդամենը հինգը:

Խնդիր 4. Գնահատման կարգը

Ա	4 միավոր	Բ1	1 միավոր
		Բ2	2 միավոր
Ընդամենը Ա	4 միավոր	Ընդամենը Բ	3 միավոր
Ընդամենը Խնդիր 4		7 միավոր	

Պատասխաններ

Ա) Էական խեղաթյուրման ռիսկերի հայտնաբերման և գնահատման համար անհրաժեշտ քայլեր

Էական խեղաթյուրման ռիսկի հայտնաբերման և գնահատման համար աուդիտորը պետք է կատարի հետևյալ քայլերը.

1. Հայտնաբերել ռիսկերը՝ կազմակերպության և դրա միջավայրի մասին պատկերացում կազմելու միջոցով, ներառելով ռիսկերին վերաբերող համապատասխան հսկողության տարրերը և դիտարկելով գործառնությունների դասերը, հաշիվների մնացորդները ու ֆինանսական հաշվետվություններին կից բացահայտումները (ներառյալ՝ նման բացահայտումների քանակական կամ որակական կողմերը):
2. Գնահատել հայտնաբերված ռիսկերը և դիտարկել, թե արդյոք դրանք համատարած կերպով են վերաբերում ամբողջությամբ վերցրած ֆինանսական հաշվետվություններին և արդյոք դրանք հավանական ազդեցություն ունեն բազմաթիվ հավաստումների վրա:
3. Հայտնաբերված ռիսկերը կապել հավաստումների մակարդակով հնարավոր սխալների հետ՝ նկատի ունենալով համապատասխան հսկողության տարրերը, որոնք աուդիտորը մտադիր է ստուգել:
4. Դիտարկել խեղաթյուրումների հավանականությունը, ներառյալ բազմակի խեղաթյուրումների հնարավորությունը, և թե արդյոք հավանական խեղաթյուրումը կարող է դառնալ էական:

Բ) Նշանակալի ռիսկ

Բ1) Նշանակալի ռիսկը էական խեղաթյուրման հայտնաբերված և գնահատված ռիսկն է, որն ըստ աուդիտորի դատողության պահանջում է աուդիտորական հատուկ դիտարկում:

Բ2) Ռիսկի գնահատման ընթացակարգերը պետք է ներառեն հետևյալը՝

- ա) հարցումներ ղեկավարությանը, ներքին աուդիտի ծառայության համապատասխան ներկայացուցիչներին (եթե այդ ծառայությունն առկա է) և կազմակերպության այլ անձնակազմին, որոնք, ըստ աուդիտորի դատողության, կարող են ունենալ

տեղեկատվություն, որը կարող է օժանդակել խարդախության կամ սխալների պատճառով
էական խեղաթյուրման ռիսկերի հայտնաբերմանն ու գնահատմանը,

բ) վերլուծական ընթացակարգեր,

գ) դիտում և զննում:

Խնդիր 5. Գնահատման կարգը

Ա	5 միավոր	Բ	5 միավոր
Ընդամենը Խնդիր 5		10 միավոր	

Պատասխաններ

Ա) Վերլուծական ընթացակարգերը կարող են օգտագործվել աուդիտի պլանավորման փուլում, համապարփակ ընթացակարգեր իրականացնելիս և աուդիտի վերանայման փուլում: Վերլուծական ընթացակարգերը ներառում են էական գործակիցների և միտումների վերլուծություն, ինչպես նաև առաջացած տատանումների և փոխհարաբերությունների ուսումնասիրություն, որոնք անհամապատասխանության մեջ են այլ առնչվող տեղեկատվության հետ կամ որոնք նշանակալի չափով տարբերվում են ակնկալվող արժեքներից: Վերլուծական ընթացակարգերը ներառում են նախորդ ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության հետ համեմատումը, նախահաշիվների և կանխատեսումների հետ համեմատումը, աուդիտորի ակնկալիքների հետ համեմատումը և կազմակերպության գործունեության ոլորտին վերաբերող միևնույն տեղեկատվության հետ համեմատումը:

Վերլուծական ընթացակարգերը որպես համապարփակ ընթացակարգեր կիրառելիս աուդիտորները պետք է հաշվի առնեն անհրաժեշտ տեղեկատվության առկայությունը, արժանահավատությունը և համադրելիությունը: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել փոխհարաբերությունների արժանահավատությունը և կանխատեսելիությունը: Այլ գործոնները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել, ներառում են էականությունը, այլ աուդիտորական ընթացակարգերը, ակնկալվող արդյունքների կանխատեսման ճշգրտության մակարդակը, փոխհարաբերությունը դիտարկելու հաճախականությունը, ինչպես նաև բնորոշ և վերահսկողության ռիսկերի գնահատումը:

Որպես համապարփակ ընթացակարգ օգտագործվող վերլուծական ընթացակարգի օրինակ է մաշվածության և ամորտիզացիայի գնահատումը: Այս ընթացակարգի իրականացման ընթացքում աուդիտորը կանխատեսում է տարվա համար ակնկալվող մաշվածության և ամորտիզացիայի ծախսը՝ օգտագործելով հաճախորդի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը մաշվածության համար և կիրառելով այն նախորդ տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված ոչ ընթացիկ ակտիվների վերջնական մնացորդների նկատմամբ՝ հաշվի առնելով ընթացիկ տարվա ընթացքում ավելացումներն ու նվազումները: Ստացված գումարը կարելի է համեմատել ընթացիկ տարվա ֆինանսական հաշվետվությունների նախագծային տարբերակում արտացոլված ծախսի հետ՝ դրա արժանահավատությունը և ճշգրտությունը գնահատելու համար:

Բ) Աուդիտորական ապացույցներ կարելի է ձեռք բերել տարբեր աղբյուրներից: Սրանք ներառում են անմիջապես աուդիտորի կողմից ձեռք բերված ապացույցները (օրինակ՝ վերլուծական ընթացակարգերի միջոցով), երրորդ կողմերից և արտաքին աղբյուրներից ստացված ապացույցները (օրինակ՝ նամակագրությունը իրավաբանների հետ, հողի և շենքերի գնահատման հաշվետվությունները), աուդիտի ենթարկվող կազմակերպության ներքին աղբյուրներից ստացված ապացույցները (օրինակ՝ տնօրենների խորհրդի ժողովների արձանագրությունները, հաշվապահական

հաշվառման համակարգից ստացվող հաշվետվությունները), ինչպես նաև բանավոր կամ գրավոր ապացույցները: Անհրաժեշտ է նաև դիտարկել՝ արդյոք գրավոր ապացույցը փաստաթղթի բնօրինակն է, թե դրա պատճեն:

Աուդիտորական ապացույցն ավելի հուսալի է, երբ այն ձեռք է բերվում կազմակերպությունից դուրս անկախ աղբյուրներից, քան այն ապացույցը, որը ստացվում է կազմակերպության գրանցումներից: Կազմակերպության ներսից ստացված աուդիտորական ապացույցն ավելի հուսալի է, երբ դրա հետ կապված կազմակերպության կողմից ներդրված հսկողությունը, ներառյալ դրա պատրաստման և պահպանման նկատմամբ հսկողությունը գործում է արդյունավետորեն: Անմիջապես աուդիտորի կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցն ավելի հուսալի է, քան անուղղակիորեն կամ հետևությունների միջոցով ձեռք բերված աուդիտորական ապացույցը: Եթե փաստաթուղթը գրավոր տեսքով է, ապա դրա բնօրինակից ստացվող աուդիտորական ապացույցն ավելի հուսալի է, քան այն աուդիտորական ապացույցը, որը ստացվում է պատճենահանված փաստաթղթից, որն ավելի հեշտ է փոփոխել:

Խնդիր 6. Գնահատման կարգը

Ա1	2 միավոր	Բ1	4 միավոր
Ա2	2 միավոր	Բ2	4 միավոր
Ա3	2 միավոր	Բ3	4 միավոր
Ա4	1 միավոր	Ընդամենը Բ	12 միավոր
Ընդամենը Ա	7 միավոր	Գ1	2 միավոր
		Գ2	2 միավոր
		Ընդամենը Գ	4 միավոր
		Ընդամենը Դ	6 միավոր
Ընդամենը Խնդիր 6		29 միավոր	

Պատասխաններ

Ա) Նյութական ոչ ընթացիկ ակտիվների աուդիտի հետ կապված ռիսկ

Ա1. Վերահսկողության ռիսկ

Ինչպես երևում է Ընկերությունում ոչ ընթացիկ ակտիվների նկատմամբ վերահսկողությունն ուժեղ է: Ընկերությունը վարում է ոչ ընթացիկ ակտիվների հաշվառման գրանցամատյան, կատարում է գրանցամատյանում գրանցված և փաստացի գոյություն ունեցող ակտիվների համադրում, ինչպես նաև գործում են վավերացման ընթացակարգեր: Հսկողության այս տարրերը պետք է ստուգվեն և, եթե դրանք արդյունավետ են, վերահսկողության ռիսկը կարող է դասակարգվել որպես ցածր:

Ա2. Բնորոշ ռիսկ

Ելնելով էականության մակարդակից՝ ոչ ընթացիկ ակտիվները հանդիսանում են էական հոդված: Ընթացիկ տարում հիմնական միջոցներում տեղի է ունեցել զգալի շարժ, սակայն, ինչպես նկարագրված է, սա հիմնավորված է կառավարչական հաշվապահի կողմից տրամադրված տեղեկատվությամբ: Տարվա ընթացքում օտարումներ չեն եղել, ինչը կարող է նշանակել, որ դրանք հաշվառումից բաց են թողնվել, կամ որ գրանցամատյանում ներառված են հնացած միավորներ: Նաև պարզ չէ՝ հաշվարկվում է արդյոք հողի համար մաշվածություն, թե ոչ: Եթե այո՝ դա ճիշտ չէ: Ընդհանուր առմամբ, բնորոշ ռիսկը կարող է դասակարգվել որպես միջին:

Ա3. Չհայտնաբերման ռիսկ

Ելնելով այն հանգամանքից, որ բնորոշ ռիսկը գնահատվել է որպես միջին, իսկ վերահսկողության ռիսկը՝ ցածր, չհայտնաբերման ռիսկը կգնահատվի որպես բարձր: Այնուամենայնիվ, ոչ ընթացիկ ակտիվների առկայության և արժևորման հետ կապված սովորաբար առկա են լինում պատշաճ

աուդիտորական ապացույցներ, իսկ առկայությունն ու արժևորումը հանդիսանում են այն առանցքային հավաստումները, որոնք հետաքրքրում են աուդիտորներին: Աուդիտի շրջանակներում կարելի է նաև իրականացնել արդյունավետ վերլուծական ընթացակարգեր՝ օրինակ, մաշվածության ընդհանուր գումարի խելամտությունը ստուգելու համար:

Ա4. Եզրակացություն

Ոչ ընթացիկ ակտիվների հետ կապված աուդիտորական ռիսկը կարող է դասակարգվել միջին կամ ցածր մակարդակներում:

Բ1) Առկայություն

Շատ դեպքերում ակնհայտ է, որ հողը և շենքերն առկա են: Այնուամենայնիվ, աուդիտորի տեսանկյունից կարևոր է ստուգել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված հողի և շենքերի բոլոր բաղադրիչները, եթե, օրինակ՝ դրանք գտնվում են ոչ այն տարածքում, որտեղ աուդիտորներն այցելում են: Հողի և շենքերի համար պետք է նաև ստուգվեն **սեփականության վկայականները**՝ համոզվելու համար, որ դրանք **ոչ միայն առկա են**, այլ նաև որ դրանք **սեփականության իրավունքով պատկանում են** հաճախորդին:

Ակտիվների այլ դասերը ևս պետք է **ուսումնասիրվեն**: Անհրաժեշտ է **գրանցամատյանից** կատարել ընտրանք և **ստուգել այդ տվյալները փաստացի առկա ակտիվների հետ**: Աուդիտի շրջանակներում հնարավոր է հենվել կառավարչական հաշվապահի կատարած աշխատանքի վրա: Աուդիտորը պետք է ստուգի հաշվապահի կատարած համադրումները: Աուդիտորները պետք է օգտագործեն ակտիվների հաշվառման գրանցամատյանում արտացոլված ցանկացած տարբերանշանները, օրինակ՝ անվտանգության պիտակները կամ շտրիխ կոդերը, որոնք փակցված են ակտիվի վրա՝ դրանք տարբերակելու նպատակով:

Պետք է իրականացվի տրանսպորտային միջոցների քանակային համադրում՝ **տարեսկզբի և տարեվերջի դրությամբ**:

Վերը թվարկված բոլոր ակտիվների համար աուդիտորը պետք է վերանայի նաև ապահովագրության գծով ծախսերը: Սա տրամադրում է **երրորդ անձից ստացված ապացույց**՝ ակտիվների առկայության վերաբերյալ, քանի որ ապահովագրական ընկերությունը չի ապահովագրի գոյություն չունեցող ակտիվը:

Բ2) Արժևորում (բացառելով մաշվածությունը)

Հողը և շենքերը հաշվառված են **սկզբնական արժեքով**, քանի որ աղյուսակում «վերագնահատված արժեք» բառերը չկան: Աուդիտորը պետք է հաստատի այս ենթադրությունը կառավարչական հաշվապահի հետ: Այնուհետև արժեքը կարող է ստուգվել **նախորդ տարվանից փոխանցված գումարների հետ**, քանի որ տարվա ընթացքում ավելացումներ չեն եղել: Նշված գումարները ստուգվել են նախորդ տարվա աուդիտի ընթացքում:

Համանման եղանակով **տրանսպորտային միջոցները** կարող են համադրվել **սկզբնական մնացորդների** հետ, քանի որ այստեղ ևս տարվա ընթացքում շարժ չի գրանցվել:

Սարքավորումների և համակարգիչների արժևորումը ստուգելու համար աուդիտորները պետք է **ստուգեն սկզբնական մնացորդը**: Այնուհետև, պետք է **վերցնել** ոչ ընթացիկ ակտիվների

ավելացումների ցանկը, և արժևորումը ստուգելու համար այն **համադրել գնման հաշիվ-ապրանքագրերի հետ:**

Վերջում աուդիտորները պետք է ստուգեն, թե արդյոք սկզբնական արժեքում ներառված են **ակտիվներ, որոնք ամբողջությամբ մաշված են և օգտագործվում են: Եթե այո, ապա արդյոք օգտակար ծառայության, մնացորդային արժեքի և մաշվածության հաշվարկման մեթոդի վերաբերյալ ղեկավարության գնահատումները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին պահանջներին:**

Բ3) Ամբողջականություն

Ոչ ընթացիկ ակտիվների աղյուսակը պետք է համեմատվի.

(1) **Սկզբնական մնացորդների** հետ (որոնք ներկայացված են նախորդ տարվա ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում):

(2) **Վերջնական մնացորդների** հետ (որոնք ներկայացված են ընթացիկ տարվա ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում):

(3) **Համապատասխան գրանցումների** հետ (սկզբնական հաշվառման գրանցամատյան):

Եթե ոչ ընթացիկ ակտիվների հաշվառման գրանցամատյանում ներառված են յուրաքանչյուր ակտիվի սկզբնական արժեքը և կուտակված մաշվածությունը, **գրանցամատյանը ևս պետք է համադրվի աղյուսակի հետ:** Ցանկացած տարբերության համար պետք է բացատրություններ ստացվեն:

Աղյուսակում արտացոլված ավելացումները ևս պետք է ստուգվեն՝ համոզվելու համար, որ սկզբնական և վերջնական մնացորդները գումարները ճշգրիտ են՝ հաշվի առնելով այդ ավելացումները:

Աուդիտորները պետք է ստուգեն որոշ **առանձին ավելացումներ** համակարգում ներառված համապատասխան գործարքների հետ՝ գնման պատվերներից հասնելով մինչև մատակարարման ծանուցումներ, այնուհետև հաշիվ-ապրանքագրերով հասնելով մինչև գրանցամատյաններ և վերջապես ֆինանսական հաշվետվություններ՝ համոզվելով որ բոլոր ավելացումները ներառվել են:

Գ) Մաշվածություն

Գ1) Համապատասխանություն

Պետք է դիտարկվի գնահատված օգտակար ծառայության (ժամկետների, դրույքաչափերի) համապատասխանությունը ՀՀՄՍ 16-ի պահանջներին և քննարկվի ղեկավարության հետ: Անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ **կարևոր գործոնները.**

- (i) Ակտիվի փոխարինման հետ կապված քաղաքականությունը
- (ii) Ակտիվի օգտագործման մոդելը
- (iii) Ընկերության ակտիվը սեփականության իրավունքով պահելու նպատակը

Գ2) Աուդիտորական ընթացակարգեր

Շենքերի մաշվածությունը կարելի է ստուգել, համադրելով շենքերի գնման ամսաթիվը նախորդ տարվա աշխատանքային թղթերի կամ սկզբնական հաշիվ-ապրանքագրերի (կամ գնումը հիմնավորող այլ

փաստաթղթերի) հետ, ինչպես նաև ստուգելով, թե ինչպես է շենքի և հողի ընդհանուր արժեքի մեջ որոշվել շենքերի մասնաբաժինը:

Ակտիվների այլ դասերի համար մաշվածությունը պետք է ստուգվի յուրաքանչյուր ակտիվի համար առանձին, քանի որ հնարավոր չէ դրանք բոլորը ստուգել ընդհանուր գումարով: Աուդիտորը պետք է վերցնի տարվա հաշվարկի մանրամասները: Աուդիտորը պետք է վերահաշվարկի մաշվածությունը՝ հենվելով ոչ ընթացիկ ակտիվների գրանցամատյանում արտացոլված տվյալների վրա և համեմատի դրանք փաստացի գրանցված տվյալների հետ:

Դ) Հավաստումներ (ԱՄՍ 315, Ա129)

Աուդիտի ենթակա ժամանակաշրջանում տեղի ունեցող գործառնությունների դասերի ու իրադարձությունների և դրանց առնչվող բացահայտումների վերաբերյալ հավաստումներն են.

Տեղի ունենալը՝ գրանցված գործառնություններն ու իրադարձությունները տեղի են ունեցել կամ բացահայտվել են և այդ գործառնություններն ու իրադարձությունները վերաբերում են տվյալ կազմակերպությանը:

Ամբողջականությունը՝ բոլոր գործառնություններն ու իրադարձությունները, որոնք ենթակա էին գրանցման, գրանցվել են, և բոլոր առնչվող բացահայտումները, որոնք ենթակա էին ներառման ֆինանսական հաշվետվություններում, ներառվել են:

Ճշգրտությունը՝ գրանցման ենթակա գործառնություններին ու իրադարձություններին վերաբերող գումարներն ու այլ տվյալները գրանցվել են պատշաճ կերպով, և առնչվող բացահայտումները պատշաճ կերպով չափվել և նկարագրվել են:

Հաշվեփակումը՝ գործառնություններն ու իրադարձությունները գրանցվել են ճիշտ հաշվապահական ժամանակաշրջաններում:

Դասակարգումը՝ գործառնություններն ու իրադարձությունները գրանցվել են ճիշտ հաշիվներում:

Ներկայացումը՝ գործառնություններն ու իրադարձությունները պատշաճ կերպով միավորվել կամ առանձնացվել են և հստակ նկարագրվել են, և առնչվող բացահայտումները տեղին են ու հասկանալի՝ ֆինանսական հաշվետվողականության կիրառելի հիմունքների պահանջների համատեքստում: